



Empowered lives.
Resilient nations.

«ՀՀ բնակատնիսայինության նախարարություն»
«ՀՀ քաղաքաշինության նախարարություն»

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ո 6

«Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱՁԾ-ԳԷՖ/00059937 ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին աջակցող միջգերատեսչական մշտական գործող աշխատանքային խմբի նիստի

«ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ՝ պրն. Ա. Կարապետյանի գրասենյակ հուլիսի 29, 2014թ.»

Մասնակցում էին՝

Ա.Կարապետյանը, ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ-նախագահ

Աշխատանքային խմբի անդամներ (նաև՝ փոխարինմամբ)՝

Ն.Ավետյանը, Կ.Գևորգյանը, Ա.Տուռլիկյանը, Թ.Բաբայանը, Գ.Մինասյանը, Ս.Աբրահամյանը, Ա.Կարապետյանը:

Հրավիրված էին՝

Ե.Աթայանը, Լ.Քոսյանը, Ա.Մովսիսյանը, Հ.Բադալյանը, Տ.Գնունին, Ն.Սաքանյանը, Ա.Եսայանը, Հ.Պետրոսյանը, Վ.Ջալալյանը:

Օրակարգում՝

1. «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱՁԾ-ԳԷՖ/00059937 ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) 1-ին բաղադրիչ կատարման ընթացքի մասին:
2. Ծրագրի շրջանակներում մշակված «Շենքերի էներգաարդյունավետության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի» նախագծի քննարկում:

Հարց 1

Ծրագրի փորձագետ Ա.Կարապետյանը ներկայացրեց օրակարգի առաջին հարցը, Ծրագրի 1-ին բաղադրիչի «էներգաարդյունավետության սկզբունքների վրա հիմնված շինարարական նորմերի ու կանոնների և ստանդարտների մշակում և կիրարկում» շրջանակներում կատարված աշխատանքների ընթացքը: Նա կարևորեց տվյալ ուղղությամբ շոշափելի արդյունքների ձեռքբերման անհրաժեշտությունը՝ Ծրագրի կայունության ապահովման նպատակով:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որի արդյունքում հստակեցվեցին Ծրագրի աջակցությամբ վերը նշված ուղղությամբ կատարված աշխատանքները՝

- ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը փոփոխվել է կապված էներգախնայողությանն (ԷԽ) և էներգաարդյունավետությանն (ԷԱ) առնչվող գործառնությունների ներառման հետ:
- Պետական գրանցում է ստացել ՀՍ 362-2013 «էներգախնայողություն: Շենքի էներգետիկ անձնագիր: Հիմնական դրույթներ: Տիպային ձևեր» ազգային ստանդարտը:
- ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով հավանության է արժանացել «ՀՀ-ում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների ցուցումներ» խորհրդատվական ձեռնարկը:

- «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի փոփոխված տարբերակը, որը ներկայումս գտնվում է ՀՀ արդարադատության նախարարությունում, կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը 2014թ. սեպտեմբերին:
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի փոփոխված տարբերակը ներկայումս դիտարկվում է «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հետ միասին՝ մեկ օրենսդրական փաթեթում:
- Հաստատման և գրանցման փուլում են գտնվում «Շենքերի էներգետիկ արդյունավետության մասին» ԵՄ դիրեկտիվը և դրան աջակցող վեց ստանդարտները:
- Մշակման փուլում է նորակառույց բնակելի շենքերի համար ռեյտինգային համակարգի ստանդարտի մշակումը:

Ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները՝

- Համապատասխանեցնել ՌԴ և ԵՄ պահանջների հետ կապված խնդիրները ՀՀ նոր օրենսդրական և ենթաօրենսդրական, կարգավորող և նորմատիվ ակտերի կազմման ընթացքում, հաշվի առնելով նաև այն փաստը, որ ՌԴ-ն մի քանի ուղղություններով, այդ թվում՝ հիշատակված հրահանգի առումով, արդիականացնում է իրավական դաշտը համաձայն ԵՄ մոտեցումների և փորձի:
- Չկատարել հղում ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1481-Ա որոշման 3-րդ կետին, քանի որ այդ դրույթն ուժի մեջ է մտնում ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի ստորագրումից հետո 5 տարի անց:
- Հաշվի առնել ներկայումս Եվրասիական Տնտեսական Ընկերակցությունում (ԵվրԱզԷՍ) քննարկման փուլում գտնվող փաստաթղթերը՝ տեխնիկական կանոնակարգերը:
- Հիմնվելով միջազգային առաջավոր փորձի վրա հղում կատարել 23 հոկտեմբերի 2013թ. ՆԿ-182-Ն «ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ նախագահի կարգադրությանը, «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքին (որը սպասվում է մինչև տարվա վերջ), որոնք կհանդիսանան իրավական հիմք սոյն տեխնիկական կանոնակարգի ընդունման համար:

Հարց 2

Ծրագրի կապալառու կազմակերպության աշխատանքային խմբի ղեկավար Ս.Աբրահամյանը ներկայացրեց օրակարգի երկրորդ հարցը, մանրամասն անդրադառնալով «Շենքերի էներգաարդյունավետության վերաբերյալ» Եվրամիության խորհրդի 2010թ. մայիսի 19-ի 2010/31/ԵՄ հրահանգի դրույթների վրա հիմնված «Շենքերի էներգաարդյունավետության վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգի նախագծի նպատակներին և դրա վերջնական տարբերակի մշակման և հաստատման հետ կապված խնդիրներին և հնարավոր խոչընդոտներին: Ս.Աբրահամյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց հատկապես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից զբաղեցված շենքերում էտ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտության վրա՝ որպես օրինակի ծառայում լայն հասարակության համար:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որի արդյունքում ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները՝

- ՀՀ արդարադատության նախարարության հաստատմանը ներկայացնելուց առաջ տերմինները հստակեցնել համաձայն օրենսդրության, օրինակ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջների: Մասնավորապես՝
 - «հիմնական նորոգում» արտահայտությունը փոխարինել «Էներգախնայողությանը կամ էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ» արտահայտությամբ,
 - հիմնավորել փաստաթղթերից վերցրած «техническая система», որը ՀՀ փաստաթղթերում դարձել է «տեխնիկական համալիր»,
 - պարզաբանել կոգեներացիան:

- ՀՀ բնակլիմայական պայմանները ընդգրկել մեթոդաբանության մեջ որպես «առնվազն» ներառվող պայմաններ:
- Վերանայել շենքերի դասակարգումը, քանի որ առկա են կրկնողություններ, օրինակ՝ «հանրային շենքեր» և «գրասենյակային տարածքներ»: Բացի այդ նշված չեն մանկապարտեզները և ծերանոցները, որոնք տարբերվում են տաք ջրի սպառման ռեժիմներով: Պետք է կարևորել դասակարգման հիմնական չափանիշների ընտրությունը, օրինակ՝ սեփականության իրավունքը (մասնավոր, թե պետական), շենքի գործառնական նշանակությունը (մանկապարտեզ, ծերանոց, հիվանդանոց, հյուրանոց և այլն): Հաշվի առնել արտադրական շենքերը դասակարգման մեջ: Վերանայման ընթացքում առաջնորդվել ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 108-Կ հրամանով: Հնարավոր է նաև լրամշակել նշված հրամանը:
- Սահմանել նոր կառուցվող և վերակառուցվող շենքերի էներգետիկ բնութագրերի նվազագույն պահանջների թիրախային ցուցանիշներ, օրինակ՝ էներգասպառումը մեկ քառ.մ-ի հաշվով: Առկա է վերակառուցվող շենքերում էտ մասով ներդրումների և փաստացի էտ վերաբերյալ վիճակագրություն: Հնարավոր է էտ միջոցառումները մշակել այնպես, որ չթանկացնեն վերանորոգման ծախսերը: Հիմնվելով ՀՎԷԷԿ կողմից իրականացված ցուցադրական նախագծերի արդյունքներով գրանցված՝ փաստացի 50% էտ, սահմանել ավելի ցածր ցուցանիշ, օրինակ՝ 30%: Կարևոր է, որ նվազագույն պահանջների սահմանման համար ոլորտը ինստիտուցիոնալ առումով պատրաստ է:
- Էներգետիկ բնութագրերի նվազագույն պահանջների թիրախային ցուցանիշները ներկայացնել տեխնիկական կանոնակարգի հավելվածում, հետագայում փոփոխել ըստ տվյալների ճշգրտման անհրաժեշտության:
- Վերը նշված ցուցանիշները, ինչպես նաև հնարավոր խթանները մշակելիս օգտվել առկա միջազգային փորձից, մասնավորապես Բուլղարիայի, Լիտվայի, Բելառուսի փորձից:
- Խմբագրել նախագծի 17-րդ կետը:
- Մշակել տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ դնելու «ճանապարհային քարտեզ»:
- Վերանայել ՀՀ կառավարության 4 օգոստոսի 2011թ. N1119-Ն որոշումը, որը գործարարների համար գումարային և ժամկետային արտոնություններ է սահմանում նորարարական տեխնոլոգիաների կիրառման դեպքում: Տվյալ մեխանիզմը գործող է, և դրանից արդեն օգտվել են մոտ 50 ընկերություններ: Փոփոխելով ծրագրերի գնահատման չափորոշիչները հնարավոր է, որ կարգը խթանի էտ և ԷԱ ոլորտները ևս:

Որոշվեց՝

1. Ընդունել ի գիտություն Ծրագրի իրականացման վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը:
2. Հատուկ ուշադրություն դարձնել տեխնիկական կանոնակարգի նախագծում օգտագործված տերմինաբանությանը, համաձայնեցնել գործող օրենսդրության հետ, հաշվի առնել ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացնելիս՝ դրա առավելապես հիմնավորված լինելու անհրաժեշտությունը:
3. Նախագծի լրամշակման համար սահմանել հետևյալ ժամկետները. տաս օր մասնակիցներից գրավոր առաջարկություններ ստանալու համար, ևս երկու շաբաթ դրանք հաշվի առնելու համար, այնուհետև նախագիծը դնել պաշտոնական շրջանառության մեջ:

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ալ. Կարապետյան

Աշխատանքային խմբի քարտուղար՝

Ար. Կարապետյան